լինել ժողովրդի ներկայացուցիչներից, ուրեմն յարմար անուն չի մնայ պետական այնպիսի մարդկերանց համար, որոնք իրանց անձնական կամքը հասարակական և ժողովրդական կարծիքից բարձր են դասում։ Ակներև է, որ Բիսմարկի գրութիւնը Գերմանիայում զանազանվում է Գամբետտայի գրութիւնից Ֆրանսիայում, չը նայելով նրանց գործունէութեան բացառական ասպարէզների և այժմեան քաղաքական նախագծերի նմանութեանը։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բէրլին, 26/11. 81.

Վերջին ընտրութիւնները աւելի քան երբ և իցէ ապացուցին, որ Գերմանիան հակումն չունի կուրօրէն հետևել իշխան Բիսմարկի ցանկութիւններին։ Համեմատելով այդ ընտրութիւնների արդիւնքը վերջինների հետ, այսինքն 1878 թուին եղածների հետ, շատ հետաքրքիր եզրակացութիւնների կարելի է հասնել։ Այստեղ մենք միջոց ունենք թուերի վրա հիմնվել, որոնք, ինչպէս յայտնի է, առաւել ճարտարախօս են, քան որ և իցէ դատողութիւններ, որովհետև վերջինները կարող են հետևանք լինել սխալ հիմքի, իսկ թուերի առաջ այս դէպքում պէտք է խոնարհվեն և նոքա, որոնց համար ցանկալի կը լինէր նոցա մէջ այլ վերաբերական մեծութիւններ տեսնել։

Ինչ և իցէ վերջին, այս տարվայ ընտրութիւնների հետևանքը այն է, որ բոլոր հակակառավարական կամ առաւել լաւ է ասել հակարիսմարկեան կուսակցութիւնները նկատելի կերպով զօրեղացան, որ նրա կուսակից պահպանողական կուսակցութիւնը մի քանի նիստ կորցրեց, իսկ մանաւանդ սոստիկ նուազված դուրս եկաւ ընտրութիւններից Նացիոնալ-լիբերալների կուսակցութիւնը, որ իր անդադար տատանումներով այլ ևս այն յարգանքը չէր վայելում որպէս առաջ։

Բայց ահա թուերը՝

	1881	1878
Սոցիալ-դեմոկրատներ	13	10
Առաջադէմներ	63	28
Սիցէսիոնիստներ	40	20
Նացիոնալ-լիբերալներ	44	67
Լիբէրալներ	7	24
(Volkspartei) ժողովրդականներ	8	5
Կղերականներ	100	95
Վէլֆներ (հանովերցի)	10	10
Կայսերական կուսակցութիւն	26	49
Պահպանողականներ	51	59
Լեհացիներ	18	14
Էլզաս-Լոթարինգցիներ	15	15
Դանեմարկացիներ	2	1

Մինչ որ ուրեմն Բիսմարկեան քաղաքականութեան անձնուէր կուսակցութիւնները, ինչպէս պահպանողականները, կայսերականները (Deutsche Reichspartei) և նրանք, որք անորոշ դիրք էին բռնում այդ քաղաքականութեան դիմացը, ինչպէս Նացիոնալ-լիբերալները և լիբերալները (ոտցա թէին պատկանում է նաև պ. ֆոն Տրայչկէ!) սոստիկ նուազված դուրս եկան ընտրութիւններից, մենք տեսնում ենք որ հակառակ կուսակցութիւնները՝ կղերականները, լեհացիները, դանեմարկացիները, իսկ մանաւանդ ճշմարիտ ազատամիտ կուսակցութիւնները ինչպէս սոցիալիստները, ժողովրդականները, ֆօրտշրիտ (առաջադէմները) և սեցեսսիոնիստները (կամ ինչպէս նրանք իրանց անուանում են՝ ազատամիտ միութիւն—Liberale Vereinigung) սոստիկ բազմաթիւ ներկայացուցիչներ ուղարկեցին Բայխստագը։

Մի խօսքով Բիսմարկի քաղաքականութիւնով դժգոհները աւելացան, իսկ նրա կուսակիցները նուազվեցան թուով։ Բայց մի այլ տեսակէտից էլ հետաքրքիր է ընտրութիւնների հետևանքը՝ այն է որ ոչ մի կուսակցութիւն չունի իր համար բազմութիւն բայխստագի մէջ, այնպէս որ կառավարութիւնը ստիպված է մի բազմութիւն իր համար ունենալու նպատակով, խմբել մի քանի կուսակցութիւններ միասին, և այդ նպատակով պիտի զիջումներ անի օրինակ կղերականներին, նրանց ձայները պահպանողականների հետ միաւորելու համար։

Հասկանալի բան է, դա անաչառ քաղաքականութիւն է, երբ նոր դիտաւորութիւններ բայխստագի մէջ անցկացնելու համար, պիտի հերքել անցեալ ձգտումները, հաշտվել թշնամիների հետ, որ նրանց օգնութեամբ յաղթել նոր թշնամիներին։ Այսպէս Բիսմարկ մօտենում է կղերականներին, նրանց զիջումներ անելով, որ այս գնով նրանց ուղղի ընդդէմ ազատամիտ կուսակցութիւնների։ Նա մի տամանակ տարի չարունակ տեղ kulturkampf կամենում է մոռանալ տալ և պաշտպանութիւն գտնել կենտրօնի մէջ ընդդէմ առեղի առաջադէմների։

Այս վերջինները անկասկած կղերականներից յետոյ ամենաբազմաթիւ կուսակցութիւն են կազմում, կամ մինչև անգամ կղերականներից առաւել զօրեղ էլ են, եթէ մնանան սեցէսսիոնիստների հետ, ուրեմն հասկանալի է, որ էղերականները պատրաստ են կառավարութեան օգնութեամբ ճնշել այս իրանց հակառակորդներին, զեկը իրանց ձեռք առնելով ժամանակով իրանք կառավարութեան առաջ հանդիսանալու իբրև ընդառնացող հակառակորդներ, պահանջելով նրանից կատարեալ լիազօրութիւն ներքին գործերի մէջ։

Ընտրութիւնների հետևանքները երբ ամբողջապէս յայտնի եղան, լսվեցան ձայներ, իբր Բիսմարկ ստիպված կը լինի իր հակումների ընդդէմ մօտենալ ազատամիտ և ձախակողմեան կուսակցութիւններին,—բայց այդ լուրերը անհիմն եղան, որովհետև իշխանը իսկոյն գործ դրեց իր սովորական միջոց՝ տարածել տուեց որ նա հրաժարական է տալու, անընդունակ համարելով իրան ձեռք ձեռքի տուած առաջադէմների հետ չարունակել կառավարել երկիրը։ Ինչպէս ամեն անգամ առաջ, նոյնպէս և այժմ հրաժարականը միայն մի սպառնալիք էր և վերջ ի վերջոյ իշխանը մնաց իր պաշտօնի մէջ իբր թէ կայսրի ցանկութեան համեմատ։

Իշխան Բիսմարկ աշխատում է ժողովրդի ցասակցութիւնը չարժել և իրան մարտիրոս ձևացնելով, իբր թէ անդադար լինելով յարձակումների առարկայ ազատամիտների կողմից, կամենում է որ խղճան նրան—կամ այլ խօսքերով, որ զարձեալ թոյլ տան նրան նրա հրէշաւոր նորութիւնները մտցնել։

Գուցէ նա իրաւունք ունի, եթէ կարծում է որ Գերմանիայի մէջ դեռ ևս ժողովրդի ցանկութիւնները անորոշ են և որ այս պատճառով երկիրը կարող է միայն բարուքվել երբ նա անպայման կը հպատակվի մի կառավարչի ցանկութեան, մի դիկտատորական կամքի, բայց այն ժամանակ ժողովրդի ներկայացութիւնը, պարլամենտը դատարկ բան է, աչքակապութիւն է, եթէ նրա նպատակն է միայն լինել խաղալիք մի դիկտատորի ձեռքում, լինի դա Բիսմարկ, կամ մի այլ ոմն։

Վերջապէս Գերմանիայում պարլամենտական կեանքը երէկվանից չէ որ կայ և ամբողջ Գերմանիան խօ մի մարդուց չէ բաղկացած։

Ա. Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են Գամբէտտայի և Ս. Պետերբուրգի ֆրանսիական դեսպան գեներալ Շանզիի մէջ եղած խօսակցութեան մասին հետևեալը։ Գամբէտտան պարզանք յայտնեց, որ դեսպանը կամենում է իր պաշտօնը թողնել, որին Շանզին պատասխանեց. «Դուք մոռանում էք, որ դեսպանի վրա երկու տեսակ պարտաւորութիւն է դրված՝ նախ պաշտպանել իր ազգի շահերը, և, երկրորդ՝ պաշտպանել այն կաբինէտի քաղաքականութիւնը, որը նրան նշանակել է։ Ֆրանսիական շահերի պաշտպանելը ինձ համար միշտ հեշտ կը լինէր. բայց ֆրանսիական նոր կաբինէտի քաղաքականութիւն պաշտպանելը իմ դիպլոմատիական անցեալի հետ անհամապատասխան կը լինէր։» Գամբէտտան հրաւիրեց նրան որոշել այն կէտերը, որոնց վերաբերութեամբ նրանք անհամաձայն են, և գեներալ Շանզին մասնացոյց արաւ կրօնական հարցի վրա։ «Այդ բանի վերաբերութեամբ, յիրաւի, դուք ճշմարիտ էք ասում, ասեց Գամբէտտա, որովհետև ես, իսկապէս վճռեցի եռանդոտ միջոցներ գործ դնել։»

—Լրագիրները հաղորդում են, որ իշխան Բիսմարկի տուած վերջին պարլամենտական ճաշի ժամանակ խօսակցութիւն ընկաւ դիպլոմատիայի մէջ գործածվող լեզուի վերաբերութեամբ։ Ֆրանսիական լեզուն մինչև այժմ ևս շարունակում է տիրապետող լինել դիպլոմատիական յարաբերութիւնների մէջ, բայց գերմանական դիպլոմատները գրագրութիւն են անում գերմանական լեզուով, թէպէտ և պատասխանները ուրիշ լեզուներով են ստանում։

—Խօսելով ռուս-թիւրքական բանակցութիւնների մասին Կ. Պոլսում, «Times» լրագիրը ապացուցանում է, որ ռուսաց հաւատարմատարների առաջարկութիւնները, որոնք հակառակվում են Բերլինի դաշնագրութեամբ որոշած Ռուսաստանի յանձն առած պարտաւորութիւններին—չը պահանջել, որպէս վարձատրութիւն զինուորական ծախսերի համար, ոչ երկիրներ ոչ էլ առաջնութիւն Բ. Դրան ուրիշ պարտատէրերի մէջ—պահանջում են Եւրոպայի մասնակցութիւնը և այդ հարցերը չեն կարող Կ. Պոլսում եղած մասնաւոր բանակցութիւններով վերջանալ։

—Լօնդոնից հեռագրում են լրագիրներին, որ նոյեմբերի 14-ին Բլէկբօրնի մէջ մարկիզ Հարտինգտոն ճառ է ասել, որի մէջ ապացուցանում էր որ ամբողջ Եւրոպան, և ոչ թէ այս կամ այն պետութիւնը միայն, պարտաւոր է պահանջել որ Թիւրքիան իրագործի Բերլինի դաշնագրի բոլոր յօդուածները։

—Թիւրքիան հրամայել է փակել յունական փոստատները Եանինայում և այլ տեղերում։ Յունաստանը Կոնդուրիոտիսի բերանով բողոքեց Դրան այդ վարմունքի դէմ, ուղղելով իր բողոքը պետութիւններին։ Պետութիւններն էլ Ասիմփաչային պաշտօնական թղթով դիմելով, խորհուրդ տուեցին նրան չափաւորել իր վարմունքը։

—Ազգային-ազատամիտների օրգան Գերմանիայում «National—Zeitung» լրագիրը այն միտք է յայտնում, որ վատ չէր լինի պակասեցնել ծախսերը զօրքի վրա և ուրեմն պակասեցնել, առհասարակ, գերմանական զօրքի թիւը։ Այդ առաջին անգամն է որ չափաւոր ազատամիտները համարձակվում են խօսել զօրքի պակասեցնելու մասին, աչքի առաջն ունենալով այն ծանր հարկերը, որ կառավարութիւնը պահանջում է ազգից իր անագին մշտական զօրքը պահելու համար։ Մինչև այժմ գերմանացի չափաւոր ազատամիտները նայում էին զօրքի վրա, որպէս գերմանական միութեան, Գերմանիայի ոյժի, նրա փառքի, նրա հզօրութեան միակ գրաւականի վրա։

—«Հայաստի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է որ ֆրանսիական կառավարութիւնը յունվար ամսին կառաջարկէ ազգային ժողովին սահմանադրութեան վերաքննութեան մասին ծրագիրը, նոյնպէս և դատաստանական հիմնարկութիւնների կազմակերպութեան վերանորոգութիւնների պրօէկտը։

—Լրագիրներում կարդում ենք որ Գամբետտայի մինիստրութիւնը կամենում է շուտով մի ծրագիր ներկայացնել ֆրանսիական ազգային ժողովին, որով պէտք է բարուքվի ֆրանսիական հոգևորականութեան դրութիւնը և ստորին հոգևորականութիւնը պէտք է ազատվի բարձր հոգևորականութեան ճնշումից։

—Կ. Պոլսի «Փունջ» լրագիրը հաղորդում է հետևեալը։ «Իրղնկայի մէջ զինուորական վարժարան մը պիտի հաստատվի, մինչև ցարդ գրտնված այս կարգի վարժարաններէն բոլորովին տարբեր. վասն զի Եւրոպա ուսեալ դատարակաց խնամոց պիտի ենթարկվի և հայերէն լեզուն ալ պարտաւորիչ կերպիւ պիտի աւանդվի ոչ միայն հայ, այլ և թիւրք և քիւրդ ուսանողաց։ Վարժարանը պիտի կառուցվի չորս հազար կանգուն գետնի վրայ ընդ վերակացութեամբ յատկապէս կազմեալ յանձնաժողովոյ մը և ծախքը պիտի վճարեն վագֆք և հայ ու թիւրք հասարակութեանց ձեռնհաս մասը։» Այս լուրը արտատպելով «Մասիս» լրագիրը զարմանում է որ այդ տեսակ կարևոր լուր, եթէ ըստոյգ է, ոչ ոք իր թղթակիցներից մինչև այժմ չէ հաղորդած իրան։

—Գերմանական բայխստագի ընդդիմադրական կուսակցութեան պարագլուխ Բիխտէր, երկար ճառ է ասել Բիսմարկի քաղաքականութեան դէմ բիւդժէտի քննութեան ժամանակ։ Ճառը ուղղված էր ամբողջութեամբ Բիսմարկի և յետադէմ կուսակցութեան դէմ։ Յետադէմներից ոչ ոք չը պատասխանեց Բիխտերի ճառին, չը նայելով որ ատենաբանը նրանցից շատերին ամենակծու կերպով դիպել է իր ճառի մէջ։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի «Մասիս» լրագիրը հաղորդում է որ Սանասարեանցի ձեռքով էրզրումի մէջ հիմնվելի դպրոցը արդէն հաստատված է և որ Սանասարեանը խոստացել է ձրիապէս 20 հայ աշակերտ կրթել իբրև գիշերօթիկ, որոնցից 5 Էրզրումից, 5 Վանից, 5 Ցարօնից և 5 էլ ուրիշ մի բազմահայ կենտրօնից։ Նորահաստատ դպրոցի մէջ, «Մասիս» ասելով, պէտք է դասախօսեն այն հայ ուսուցիչները, որոնք կրթվել են Գերմանիայում Սանասարեանի ծախսով։ Վերջապէս լրագրում ասված է, որ Կարինի առաջնորդ գեր. Օրմանեան, հիմնադրի խնդիրքով, տանձնած է այս նոր վարժարանի վրա վերին հսկողութիւնը։

* * *

Ամենամեծ տպարանը աշխարհիս երեսին լինելու է Ամերիկայի Վաշինգտոն քաղաքի պետական տպարանը։ Նրա չինութիւնը բռնում է 80,000 անգլիական քառակուսի ոտնաչափ, պարունակում է իր մէջ 63 արագատիպ մեքենայ, որոնք տպում են մի ժամվայ մէջ մինչև 15,000 օրինակներ։ Այդ արագատիպ մեքենաների մօտ բռնում են 144 վարպետներ և 91 կանայք։ Երկրորդ յարկում գտնվում են 2,300 ջուխտ կաստաներ այլ և այլ տառերով, որոնց մօտ բռնում են 300 գրաչարներ։ Տպարանը ունի 25 սրբագրիչներ։ Տպարանի մէջ գտնվում է և կազմարարական բաժին, որտեղ բռնում են 500 հոգի։ Պարլամենտական նիստերի հաշիւների շարելու համար առանձին բաժին կայ, նոյնպէս կան առանձին բաժիններ ստէրէօտիպիայի, գալվանօպլաստիկայի համար և ծրարներ պատրաստելու համար։ Տպարանի պահելը նստում է կառավարութեանը տարեկան 2 միլիոն ռուբլի ծախս։ Ուրեմն որքան շահ պէտք է ունենայ այդ հիմնարկութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 Նոյեմբերի։ Պետական կենտրոնին կից բացվում է երկաթուղիների անտեսութիւնը վերաքննող բաժին։ Դատաստիքը շերմաշրէի մասին երեք տարի բանտարկութեան հաստատված է։ Անշափահաս գործաւորների աշխատանքի մասին նախագիծը որոշում է. պարտադիր ուսում, արգելել աշխատանքը մինչև 12 տարեկան հասակը, մինչև 18 տարեկան հասակը թոյլ տալ օրական 10 ժամից ոչ աւելի աշխատանք և այն էլ անպատճառ գերեկով։ Նշանակվում են գործարանական տեսուչներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 91 ր. 37 կ., հինգերորդ 90 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 50 կ., երկրորդ 215 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 12 կ., երկրորդ 90 ր. 12 կ., երրորդ 90 ր. 12 կ., ոսկի 7 ր. 74 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 217 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 268 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի արտատպութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ